



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«23» 10 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000090

Ձեռնարկողը՝

«ՊԵԳԱ» ՍՊԸ

ք. Վանաձոր, Տպագրիչների փակուղի 5

Գործունեությունը՝

Լոռու մարզի Բորբորթի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի Աղվեսաքար տեղամասի ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվեկշիռություն
Լոռու մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝



Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 6 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ
ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000090

<23> 10 2020թ.

**Լոռու մարզի Բորբորթի դիաբազային պորֆիրիտների
հանքավայրի Աղվեսաքար տեղամասի ընդլայնման շրջակա
միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն**

Ներածական մաս

Ձեռնարկող՝ «ՊԵԳԱ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝ Շրջակա միջավայրի վրա ազդեցության
գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/
/Ա կատեգորիա/
Տեղադրման վայրը՝ Լոռու մարզ, Թումանյան համայնքի Մարց գյուղ

«ՊԵԳԱ» ՍՊ ընկերության կողմից /այսուհետ՝ Ընկերություն/ նախատեսվում է Բորբորթի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի Աղվեսաքար տեղամասի ընդլայնում և ժամկետի երկարաձգում, որի նախագիծը կատարված է Ընկերության տեխնիկական առաջադրանքի հիման վրա:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի, 4-րդ մասի, 2)-րդ կետի գ. ենթակետի՝ Բորբորթի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի Աղվեսաքար տեղամասի ընդլայնումը դասակարգվում է «Ա» կատեգորիայի գործունեության տեսակների ցանկում:

Նկարագրական մաս Հանքավայրը գտնվում է Բորբորթի լեռան հարավ-արևելյան լանջերին՝ լեռնագագաթից (2363,7մ) 900մ հարավ-արևելք: Տեղամասը տեղակայված է Դեբեդ-Աղստև գետավազանների ջրբաժանային մասում՝ 2160-2210մ բացարձակ բարձրությունների վրա: Հանքավայրի տարածքը լեռնային հողածածկ ճանապարհներով կապված է մոտակա՝ Դեբեդ (16կմ) և Դսեղ (21կմ) բնակավայրերի հետ: Հանքավայրին ամենամոտ գտնվող Եղեգնուտ բնակավայրը գտնվում է 11.5կմ հյուսիս-արևմուտք:

Բորբորթի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի Աղվեսաքար տեղամասը գտնվում է Թումանյան համայնքի Մարց բնակավայրի վարչական սահմանում, զբաղեցնում է 1.54 հա մակերես: Ընկերության կողմից Աղվեսաքար տեղամասի 0.44 հա մակերեսում 2008 թվականից ընդերքօգտագործման աշխատանքներ են իրականացվում, թիվ 269 ընդերքօգտագործման իրավունքի սահմաններում: Ընկերության կողմից ընդլայնման համար հայցվող տարածքի կոորդինատները ARM WGS-84 համակարգով հետևյալն են:

1. Y=8478130 X=4522912
2. Y=8478026 X=4523015



3. Y=8478090.47 X=4523072.53

4. Y=8478237 X=4522934

Բորբորթի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի Աղվեսաքարի տեղամասի պաշարները՝ C₁ կարգով 290,4հազ.մ³ քանակով հաստատվել են ՀՀ ՕՀԴԳ-ի կողմից 30.11.2007թ. թիվ 149 որոշմամբ: Պաշարները հաստատվել են որպես հումք ԳՈՍՏ 9479-98-ի պահանջներին համապատասխան՝ երեսապատման իրերի համար բլոկների արտադրության նպատակով, իսկ թափոններից ստացված խիճն իր որակով բավարարում է 9267-95 ԳՈՍՏ-ի պահանջները: Բլոկների ելքը կազմում է 31.1%: Հանքավայրի դիաբազային պորֆիրիտները համարվել են պիտանի բոլոր տեսակի կառույցների և շինվածքների երեսապատման համար: Պաշարների մնացորդը կազմում է 285726մ³: Սույն նախագծով նախատեսվում է ընդլայնելով բացահանքը արդյունահանել ամբողջ հաշվեկշռային մնացորդային պաշարները: Ընկերությանը հանքարդյունահանման աշխատանքների համար հատկացված է հանքավայրի Աղվեսաքար տեղամասի հյուսիս-արևմտյան թևը:

Հանքավայրը ծածկող ապարների միջին հզորությունը կազմում է 0.45մ: Քանի որ տարածքում իրականացվել են արդյունահանման աշխատանքներ, արդեն իսկ ենթարկված է տեխնածին աղդեցության: Տեղամասում ստորերկրյա ջրային հորիզոններ և ելքեր չեն հայտնաբերվել: Ընդլայնվող բացահանքի տարածքը չի առնչվում բնապահպանական տեսանկյունից խոցելի, բնության հատուկ պահպանվող տարածքների, անտառային կամ պատմամշակութային տարածքների հետ:

Լեռնատեխնիկական պայմանները բարենպաստ են և հնարավորություն են տալիս հանքարդյունահանման աշխատանքներն ընդլայնվող բացահանքում շարունակել բաց լեռնային աշխատանքներով:

Ընկերության կողմից ընդլայնվող բացահանքը վերջնական դիրքում բնութագրվում է հետևյալ պարամետրերով.

- Ամենամեծ երկարություն – 200,0մ;
- Ամենամեծ լայնություն – 91,0մ;
- Ամենամեծ խորություն – 41.0մ;
- Հանքաստիճանների բարձրությունը – 5.0մ;
- Անվտանգության բերմայի լայնություն – 2,0մ;
- Բացահանքի կողի թեքման անկյունը – 64°.
- Հանքային դաշտի օտարման տարածքը – 1.4 հա;
- Օգտակար հանածոյի հաշվեկշռային պաշարներ – 285726մ³;
- Օգտակար հանածոյի կորզվող պաշարներ – 258296.0 մ³;
- Մակաբացման ապարների ծավալ– 41260.0մ³:

Քանի որ բացահանքը փաստացի բացված է, բոլոր հանքաստիճանների բացումը՝ 2165մ նիշից դեպի 2205մ նիշ ունեցող հորիզոն իրականացվելու է գրունտային ավտոճանապարհից՝ հորիզոնական կիսախրամների անցումով: Հետագա բնականոն աշխատանքների համար անհրաժեշտ է առաջին տարում՝ շահագործմանը զուգընթաց իրականացնել 2205մ նիշ ունեցող հորիզոնի բացում, որի համար անհրաժեշտ կլինի գոյություն ունեցող գրունտային ճանապարհից /2165մ նիշից/ դեպի 2205մ նիշ ունեցող հորիզոն՝ 550մ երկարությամբ, 7մ լայնությամբ գրունտային ավտոճանապարհի անցումով:



Դիաբազային պորֆիրիտների հաստաշերտի մշակման ժամանակ հանքարդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել միակողանի, ընդլայնական ընթացաշերտերով մշակման համակարգով՝ մակաբացման ապարներն արտաքին լցակույտ տեղափոխելով: Համաձայն հանքավայրի շահագործման տեխնոլոգիական սխեմայի, միաքարի արդյունահանման աշխատանքները նախատեսվում է կատարել հորատասեպային եղանակով:

Ընդունված մշակման համակարգի տարրերն են.

1. Հանքաստիճանի բարձրություն.

- աշխատանքայինը՝ 5մ /2.5մ բարձրությամբ երկու ենթաստիճաններով/;

- վերջնական դիրքում, մարելուց հետո՝ 5.0մ;

2. Հանքաստիճանի թեքման անկյունը հորիզոնի նկատմամբ՝ 900;

3. Ընթացաշերտի լայնությունը՝ 1,0մ;

4. Հանույթային բլրկի երկարությունը՝ 6-8մ;

5. Աշխատանքային հրապարակի ամենափոքր լայնությունը՝ 20,0մ:

Միաքարի անջատումը զանգվածից նախատեսվում է կատարել հորատա-սեպային աշխատանքներով (ուղղաձիգ ուղղությամբ միաքարի անջատում): Լցակույտառաջացումը կկատարվի հանքային դաշտի սահմաններից դուրս, նրա հյուսիս արևելյան մասում, եզրագծին զուգահեռ՝ 2165մ նիշ ունեցող հորիզոնից: Լցակույտ առաջացնող 219226մ³ ընդհանուր ծավալով մակաբացման ապարները բացահանքային դաշտի տարածքում ներկայացված են՝ 19595.0մ³ փխրուն-բեկորային դեյուվիալ առաջացումներով, 21665.0մ³ խիստ ճաքճքված դիաբազային պորֆիրիտներով (փուշտա) և 177966.0մ³ ծավալով արտադրական թափոններով: Մակաբացման ապարների հեռացումը կկատարվի առանձին: Փուխր-բեկորային մակաբացման ապարները առանց բուլդոզերով նախնական մշակման, իսկ փուշտայի շերտը փխրեցուցիչով նախնական մշակվելուց հետո, առանձին կկուտակվեն բացահանքի հատակի վրա, այնուհետև էքսկավատորով կբարձվեն ավտոինքնաթափ և կտեղափոխվեն բացահանքի հյուսիս-արևելյան մասում 450.0մ միջին հեռավորության վրա տեղադրված արտաքին լցակույտեր: Բլրկների արտադրության ժամանակ արտադրական թափոնները 3737.3մ³/տարի կամ 24.96մ³/հերթ ծավալով արտաքին լցակույտում կպահեստավորվեն փուշտայի հետ միասին՝ հետագայում որպես խճի հումք օգտագործելու համար: Ըստ խորության բացահանքը շահագործելուց հետո, փխրուն բեկորային մակաբացման ապարները կտեղափոխվեն մշակված տարածություն, կփոխվեն բացահանքի հատակին ու կհարթեցվեն:

Լցակույտերի զբաղեցրած ընդհանուր տարածքը կկազմի 19183մ², վերևի հարթակի մակերեսը՝ 11515 մ², ամենամեծ բարձրությունը՝ 25.0մ: Արտադրական թափոնների տեղափոխումը արտաքին լցակույտ և բլրկների տեղափոխումը բացահանքից մինչև 25կմ միջին հեռավորության վրա գտնվող մշակման արտադրամաս կկատարվի ավտոինքնաթափով:

Քանի որ բացահանքը նախկինում շահագործվել է, տեղամասի մոտ 0,45հա մակերեսում հողային ծածկույթն արդեն իսկ խախտված է արդյունահանման աշխատանքների իրականացման արդյունքում: Ընդլայնվող բացահանքի մակաբացման աշխատանքների ժամանակ բերրի հողաշերտով ապարները կպահվեն նախկինում



պահեստավորված բուսաշերտի հետ և բացահանքի շահագործման ավարտից հետո կօգտագործվեն ռեկուլտիվացիայի նպատակով:

Բացահանքի ջրամատակարարումը կատարվում է արդյունաբերական հրապարակը խմելու ջրով ապահովելու, ինչպես նաև աշխատանքային հրապարակները, լցակույտերը և ավտոճանապարհները փոշենստեցման նպատակով ջրելու համար: Բացահանքում տեխնիկական և խմելու նպատակով ջուրը կբերվի ջրատար մեքենաներով՝ պայմանագրային հիմունքներով: Կենցաղային կեղտաջրերը կհեռացվեն անջրթափանց հոր, որը սահմանված կարգով կդատարկվի:

Հանքավայրի շահագործման ընթացքում մթնոլորտային օդի վրա ազդեցությունը պայմանավորված կլինի հիմնականում ծխագազերի առաջացմամբ և փոշու արտանետումներով: ՇՄԱԳ-ում հաշվարկվել են անշարժ և շարժական աղբյուրներից արտանետումների չափաքանակները, որոնք աղտոտող նյութերի համար կազմում են՝ փոշի - 0.129գ/վրկ, կամ 0.56տ/տարի, ածխածնի օքսիդ - 5,52 գր/վրկ, կամ 23.85տ/տարի, ածխաջրածին - 1,099 գր/վրկ, կամ 4.75տ/տարի, ազոտի երկօքսիդ - 0.818 գ/վրկ, կամ 3.53տ/տարի, մուր - 0,212 գ/վրկ, կամ 0.915տ/տարի, ծծմբային գազ - 0,283 գ/վրկ, կամ 1.22տ/տարի: Իրականացվել են մթնոլորտում վնասակար արտանետումների ցրման հաշվարկներ, որոնց արդյունքերի համաձայն սպասվելիք գետնամերձ կոնցենտրացիաները գտնվում են բնակելի գոտիների համար սահմանված նորմերում: Քանի որ մոտակա բնակավայրը գտնվում է ավելի քան 11.5կմ հեռավորության վրա, սանիտարապաշտպան գոտու կազմակերպման նպատակով հատուկ միջոցառումներ չեն նախատեսվում: Իսկ գումարային հաշվարկային ծայնային բնութագիրը ևս կլինի բնակելի գոտիների համար սահմանված նորմերից /45ԴԲԱ/ ցածր:

Դիաբազային պորֆիրիտների արդյունահանման աշխատանքների արդյունքով խախտված տարածքների լեռնատեխնիկական և կենսաբանական վերականգնումներն իրականացվելու են շահագործական աշխատանքների ավարտից հետո: Լեռնատեխնիկական վերականգնումը կատարվում է բացահանքը ըստ խորության ամբողջությամբ շահագործելուց հետո: Ռեկուլտիվացիայի նպատակով փխրուն-բեկորային մակաբացման ապարները կտեղափոխվեն մշակված տարածություն, ՏՕ-170 բուլդոզերով կփռվեն բացահանքի հատակին և կհարթեցվեն: Լեռնային աշխատանքների ավարտից հետո կհարթեցվի նաև թափոնների լցակույտի /խճի հումքի/ մակերևույթը: Բացահանքի հատակի ռեկուլտիվացիայի ենթակա տարածքը ընդհանուր կկազմի 22286մ², իսկ լեռնատեխնիկական վերականգնման /ներառյալ՝ թափոնների լցակույտի մակերևույթի հարթեցման աշխատանքներ/ իրականացման ծախսերի խոշորացված նախահաշիվը գնահատվել է 1596.7հազ. դրամ: Կենսաբանական ռեկուլտիվացիայի նպատակով կօգտագործվեն պահեստավորված բերրի հողաշերտով մակաբացման ապարները: Կենսաբանական ռեկուլտիվացման ծախսերը գնահատվել են 440 000 դրամ, իսկ ընդհանուր ռեկուլտիվացիոն ծախսերը կկազմեն՝ 1596,7 + 440,0 = 2036,7հազ.դրամ:

Բորբորթի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի Աղվեսաքար տեղամասի լեռնակապիտալ և շահագործման աշխատանքների ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը կանխարգելելու և մեղմելու նպատակով մշակվել են միջոցառումների ծրագիր ուղղված՝ մթնոլորտային օդի, հողային, ջրային ռեսուրսների,

կենսաբազմազանության պահպանությանը: Նախատեսվել են նաև աշխատանքային միջավայրում աշխատողների անվտանգությանը, արտակարգ իրավիճակների արձագանքմանը, տարբեր տեսակի թափոնների /ներառյալ վտանգավոր թափոններ/ կառավարմանը, հնարավոր սոցիալական ազդեցությունների մեղմմանն ու կանխարգելմանն ուղղված միջոցառումներ: Բոլոր միջոցառումներն իրենց գործողություններով ամփոփվել են բնապահպանական կառավարման և մոնիթորինգի պլաններում:


Ընկերության կողմից, արդյունահանմանը զուգընթաց իրականացնելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված մշտադիտարկումներ, որոնք ներառվել են բնապահպանական մշտադիտարկումների պլանում և որպես օբյեկտներ դիտարկվել են՝ մթնոլորտային օդը, հողային ծածկույթը, կենսաբանական միջավայրը: Մշտադիտարկումների իրականացման տարեկան ծախսերը կկազմեն 150.0 հազ ՀՀ դրամ:

Եզրափակիչ մաս: Նախատեսվող գործունեության ՇՄԱԳ հաշվետվության փորձաքննությունն իրականացվել է «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի պահանջներով: Գնահատման և փորձաքննության փուլերում գործունեության իրականացման վերաբերյալ Լոռու մարզի Մարց գյուղում անցկացվել են հանրային քննարկումներ /չորս քննարկում/, որոնց ընթացքում գործունեության իրականացումը մասնակիցների կողմից արժանացել է հավանության՝ կարևորվելով լրացուցիչ աշխատատեղերի ստեղծումը և համայնքում սոցիալական ծրագրերի իրականացումը:

Փորձաքննական գործընթացին մասնակցել են պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներ, առողջապահության և արտակարգ իրավիճակների նախարարությունները, Լոռու մարզպետարանը, որոնց կողմից ներկայացված կարծիքները ևս հաշվի են առնվել փորձաքննության գործընթացում: ՇՄԱԳ հաշվետվությունում ներկայացված բնապահպանական միջոցառումների և մոնիթորինգի գործողությունների իրականացման դեպքում, գործունեության իրականացման ընթացքում աղտոտվածությունը օդային և ջրային ավազանների, հողային ռեսուրսների ինչպես նաև կենսաբազմազանության վրա կգտնվի թույլատրելի նորմերի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

1. Հանքարդյունահանման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է առաջնորդվել 22 փետրվարի 2018թ. N 191-Ն որոշման պահանջներով՝ շրջակա միջավայրի բաղադրիչների /մթնոլորտային օդ, հողային ծածկույթ, կենսաբազմազանություն/ մշտադիտարկումների արդյունքների տարեկան հաշվետվությունը՝ ՀՀ կառավարության 2018թ. փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով ներկայացնել լիազոր մարմին:
2. Հանքավայրի շահագործման ընթացքում աշխատողների անվտանգության և առողջության ապահովման համար անհրաժեշտ է առաջնորդվել ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխի պահանջներով:




3. Գործունեության իրականացման ընթացքում անհրաժեշտ է ապահովել և պահպանել բնապահպանական կառավարման պլանում և մշտադիտարկման ծրագրում նախատեսված միջոցառումների իրականացումը և ժամանակացույցերը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՊԵԳԱ» ՍՊԸ կողմից ներկայացված Բորբորթի դիաբազային պորֆիրիտների հանքավայրի Աղվեսաքար տեղամասի ընդլայնման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝

Գլխ. մասնագետ՝



Գ. Գևորգյան

Հ. Մկրտչյան

